Հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան

ԿԱՐԾԻՔ

Բարսեղյան Սյուզաննայի «Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում (էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին

Աշխատությունը նվիրված է «Էթնիկ մեդիա» հասկացությանը և դրա՝ հայ սփյուռքում ունեցած հիմնական գործառույթներին, ինչպես և առանձնահատկություններին ու նշանակությանը սփյուռքի ինքնության ձևավորման ասպարեզում:

Ատենախոսը բավականաչափ հաջողությամբ ներկայացրել է իր աշխատանքի տեսական հիմքերը, այնուհետև կարողացել է ներդնել դրանում գիտական որոշակի նորույթներ, այն է՝ առաջին անգամ հայկական մամուլի նկատմամբ կիրառել «Էթնիկ մեդիայի» հայեցակարգը և սփյուռքայհայ մամուլը գնահատել իր առանձնահատկություններին համապատասխան, ազգային նկարագրին համահունչ վերլուծական մոտեցումով:

Հեղինակն, ընդհանուր առմամբ, հաջող է ձևակերպել իր ատենախոսության նպատակը և այն ամբողջացնող խնդիրներն սփյուռքահայ իրականության՝ Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի համայնքների մամուլի համադրական վերլուծությամբ: Այդ խնդիրներից կցանկանայինք նշել միմյանց սերտաճած այնպիսի հարցեր, որպիսիք են հայ սփյուռքի մամուլի տեղն ընդունող երկրի գործառող լրատվամիջոցների համակարգում, հայրենիք-սփյուռք հարաբերությունների բնութագիրը և հայ մամուլի դերը էթնիկական ինքնության պահպանության գործում:

Ատենախոսության մեթոդական հիմքը համապատասխանում է մեզանում որպես նորույթ հանդես եկած այս աշխատության հետազոտական ուղղությանը, ինչպես և թեմայի կատարման մեջ աչքի ընկնող՝ գլուխների հաջորդականության տրամաբանությանը:

Աշխատանքն ունի գիտական հետազոտության համար անհրաժեշտ հետազոտական բազա, ինչպես և օգտագործած ու թեմային առնչվող տարրալեզու գիտական գրականություն, բավարար չափով օգտվել է նաև համացանցային աղբյուրներից և աղբյուրագիտական այլ տարրերից:

Կարծում ենք, որ այս աշխատության մեջ հաջողությամբ են իրագործվել ատենախոսի առջև դրված խնդիրները, որով և մի հայտնի չափով պետք է պայմանավորել դրա տեսական ու գործնական արժեքը:

Ատենախոսության վերոհիշյալ դրական ձեռքբերումների հետ մեկտեղ, պետք է նշենք նաև հեղինակի թույլ տված քննադատելի կողմերը, որոնք վերաբերում են ատենախոսության բովանդակությանը, ինչպես և մի քանի այլ վրիպումների:

1. «Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում» վերնագիրը իմաստային, պատմալեզվական, ազգագրական և այլ առումներով ճիշտ չէ, առավել ևս, երբ հետազոտողը հայաստանցի է, այլ ոչ թե՝ օտար: Այդ առումով կարելի էր աշխատանքը վերնագրել՝ «Հայ մամուլի դերը սփյուռքում» կամ՝ «Սփյուռքահայ մամուլի դերը արտերկրի էթնիկ մամուլի համատեքստում»: Հստակորեն չի բացատրվում «էթնիկ մամուլ» հասկացողությունը,
2. անհրաժեշտ էր ուսումնասիրվող թեմայի ժամանակագրական հատվածն անպայման նշել վերնագրում՝ փակագծերի մեջ, իսկ տեքստի մեջ համապատասխանաբար վերլուծել տվյալ ժամանակաշրջանի հետ կապված սփյուռքյան դիրքորոշումները՝ պատմաքաղաքական գնահատական տալով հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումներին, Հայաստանի դիմագրաված խնդիրներին և այլն,
3. «հայկական մամուլ», «հայկական սփյուռք» եզրույթների փոխարեն հարկ է գործածել «հայ մամուլ», «հայ սփյուռք» ձևերը,
4. ատենախոսության է 1.1 և 1.2 ենթագլուխներում ավելի քան 21 էջ կազմող շարադրանքը առավել նպատակահարմար կլիներ սեղմ տարբերակով իր տեղը գտներ ներածության մեջ, որտեղ են սովորաբար ամփոփվում թեմայի վերաբերյալ աղբյուրագիտական վերլուծությունները,

5. ատենախոսության մեջ առկա են հայերենին անհարիր քերականական և շարահյուսական ձևերի կիրառման բազմաթիվ օրինակներ (տե՛ս էջ 5, 8, 15, 18, 20, 25, 29, 31, 41, 42, 7481, 82, 95), ինչպես և տեխնիկական վրիպակներ,
6. ատենախոսության մատենագիտության կամ օգտագործած գրականության ու գիտական աղբյուրների բաժնում բացակայում են հայրենի և սփյուռքահայ, ինչպես նաև ՀՅԴ մամուլի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները,
7. ատենախոսն իր աշխատության մեջ թեև գրում է, որ թեմայի ուսումնասիրության համար նկատի է ունեցել հայ սփյուռքի 3 տարբեր միջավայրերի մամուլը, սակայն հետազոտության տողատակերում նշված չեն այն թվահամարներն ու հոդվածները, որոնց հիման վրա է նա պատկերացում կազմել և հասել համապատասխան եզրակացության,
8. ատենախոսը, ծանոթ լինելով թեմային առնչվող օտար գրականությանը, փորձել է սփյուռքի 3 տարբեր համայնքների մեջ հրատարակվող հայ մամուլի ուսումնասիրությամբ և արևմտյան տեսության օրինակով շարադրել իր ատենախոսությունը, ինչի հետևանքով կան որոշ վիճելի եզրակացություններ:

Նշված թերությունները և բացթողումներն, այսուհանդերձ, չեն նսեմացնում հեղինակի մշակած հիմնահարցի կարևոր նշանակությունը սփյուռքահայ մամուլի արժևորման գործում, ինչպես և այն, որ ատենախոսն հիմնահարցի մշակման գործում հանդես է բերել սեփական մոտեցումներ և տրամաբանություն՝ համոզելով, որ ընդունակ է կատարելու գիտական նշանակություն ունեցող հետազոտություն: Ելնելով դրանից, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության ու Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժինները գտնում են, որ Սյուզաննա Սոսի Բարսեղյանի «Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում (էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» վերնագրով ատենախոսությունը համապատասխանում է հեղինակի հայցած՝ Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության և Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժինների 2020 թվականի փետրվարի 20-ի համատեղ նիստում :

Քննարկմանը մասնակցեցին Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ. պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ. պրոֆ. Գևորգ Ստեփանյանը, առաջատար գիտաշխատողի պաշտոնակատար, բ.գ.թ. Մարիամ Հովսեփյանը, առաջատար գիտաշխատող, պ գ. թ. Քնարիկ Ավագյանը, գիտաշխատող, պ.գ.թ. Անի ֆիշենկճյանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ , պ. գ. դ., պրոֆեսոր Ալբերտ Խառատյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի վարիչ

պ. գ. դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյան

20.02.2020

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ. պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանի և Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանի ստորագրությունները հաստատում եմ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի

գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան

20.02.2020